LD TOUR
TRAVEL AGENCY

# ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ $N^0$ **19 -____________**

«___»_______________201__թ.

______________________________________________________________________________________________
ֆիզիկական անձի ազգանունը, անունը

այսուհետ` «Պատվիրատու», մի կողմից, և «Փիար Սիսթեմս» ՍՊԸ այսուհետ` «Կատարող», ի դեմս` տնօրեն Լևոն Դեմիրճյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Սույն պայմանագրով` Կատարողը պարտավորվում է Սպառողին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար: Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունների ժամկետի ավարտի պահին` եթե Սպառողի կողմից Կատարողին հանգստի ավարտից հետո մեկ շաբաթյա ժամանակահատվածում չի ներկայացվել որևէ գրավոր առարկություն:

1.2 Մատուցվող ծառայությունները ներառում են`

Փաթեթի տեսակը` ☐ Հյուրանոցային փաթեթ ☐ Զբոսաշրջային փաթեթ

Ծառայությունից օգտվում են ☐ Պատվիրատուն ☐ընտանիքի 1 անդամ ☐ ընտանիքի 2 անդամ ☐ ընտանիքի 3 անդամ ☐ ընտանիքի 4 և ավելի անդամ

Հանգստի սկիզբ «______»_____________________201_____թ. ժամ________ հանգստի ավարտ «______»_____________________201______թ. ժամ________

Հանգիստ_____________________________________________________________________________________-ում
նշել մարզը, քաղաքը, հյուրանոցի լրիվ անվանումը

Տրանսպորտային ծառայություններ ☐ միակողմանի ☐ երկկողմանի Տրանսպորտային միջոցի տեսակը_______________________________
Սնունդ ☐ նախաճաշ ☐ ճաշ ☐ ընթրիք ☐ հավելյալ սնունդ
Այլ ծառայություններ ☐ բուժում ☐ գիդ ☐ հավելյալ վճարովի ծառայություններ

______________________________________________________________________________________________
(տեսարժան վայրերի այցելության ծրագրերը, երթուղիները և փաթեթի գնի մեջ ներառված այլ ծառայություններ) (թվարկել ծառայությունները)

1.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարելու կամ սպառողի կողմից պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում սպառողի նկատմամբ կիրառվող տուգանքի չափ է սահմանվում`
ա. պայմանանագրի գնի քսանհինգ տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ.
բ. պայմանագրի գնի հիսուն տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է սույն ենթակետի (ա) պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել պայմանագրով նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գրավոր ծանուցումը զբոսաշրջային օպերատորին սպառողի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

2.1.Կատարողը պարտավոր է`
2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.
2.1.2 Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում.
2.1.3. Պատվիրատուի պահանջով առավելագույնը 1 օրվա ընթացքում անհատույց վերացնել առաջացած բոլոր թերությունները,
2.3 Զբոսաշրջիկը ժամանակավոր բնակության վայրերում իրավունք ունի`
2.3.1. ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,
2.3.2 ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանության երաշխիքներ:
2.3.3 օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան` պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:
2.3.4 օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:
2.4 Զբոսաշրջիկը ժամանակավոր կեցության վայրերում պարտավոր է`
2.4.1. պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմանները և կանոնները,
2.4.2 չխախտել հասարակական կարգը, պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները:
2.5 ժամանակավոր կեցության վայրերում զբոսաշրջիկը պատասխանատվություն է կրում օրենսդրությամբ սահմանված կարգով, այդ թվում` իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

**3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը**

3.1 Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է ____________________ (______________________________________________________________) դրամ,

Պայմանագրում նշված հյուրանոցային տնտեսության կողմից մատուցման ենթակա ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է ____________________ (______________________________________________________________) դրամ:

3.2 Սույն պայմանագիրը կնքելուց 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն փոխանցում է կանխավճար: Սույն պայմանագրով Կատարողի համար պարտավորություններ առաջանում են կանխավճարի փոխանցումից հետո: Պայմանագրային գինը պետք է վճարվի մինչև տվյալ տարվա ավարտը մնացած ամիսների ընթացքում` հավասարաչափ մարումներով: Ընդ որում, եթե Պայմանագրով պայմանագրային գինը գերազանցում է սոցիալական փաթեթով հատկացվող գումարի սահմանաչափը, ապա գերազանցող մասը Պատվիրատուն վճարում է սեփական միջոցներից:
3.3 Սույն պայանագիրը ստորագրելով` Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը Կատարողի կողմից համապատասխան բանկ սույն պայմանագրի գնի ստացման պահանջագիր ներկայացնելուն` բանկի կողմից Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվից անակցեպտ ձևով սույն պայմանագրի գնի գանձման և Կատարողին փոխանցելու համար:

**4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանգիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**5. Վեճերի լուծման կարգը**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**6. Եզրափակիչ դրույթներ**

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված` Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, բացառությամբ սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված պայմանագրի գնի` Կատարողի կողմից միակողմանիորեն ավելացնելու դեպքի:
6.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

**7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Փոխանցման հաշիվ**

| | | |
|---|---|---|
| Կատարող` «Փիար Սիսթեմս» ՍՊԸ | Պատվիրատու | |
| Հասցե` ՀՀ, ք. Վեդի, Արարատյան 41շ., 57 | Հասցե | |
| Հ/Հ ` 2478102144830000 | Անձնագիր | |
| Բանկ ` «Արդշինբանկ» ՓԲԸ | Աշխատանքի վայր | |
| ՀՎՀՀ ` 00869823 | Աշխատանքի վայրի հասցե | |
| Կապ` 094-64-64-51 | Կոնտակտներ | |

| NN | Անվանումը | Քանակը | Միավ. | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հանգստի կազմակերպում | | ուղեգիր | | |
| Գումարը բառերով` | | | | | |

«Փիար Սիսթեմս» ՍՊԸ տնօրեն` Լ. Դեմիրճյան　　　　　　　　　　Պատվիրատու

_____________________________　　　　　　　　　　_____________________